են վանքիս, մինչև մօտ ժամանակներն ևս վանքէս ամեն տարի նուիրակ գնալով այգիներու հասոյթն կը ստանային։

Ըստ վկայութեան վանքի միաբանաց Բագուան լինելու է այժմեան հռչակաւոր վանքի հանդէպն և կարաւանի ճանապարհի վերան, Եփրատի աջ կողմն, ուր տեսնուած են բազմաթիւ աւերակներ, նաև կը նշմարուին մեծ եկեղեցւոյ մի հիմերն և որոյ հիւսիսն քիչ բարձր տարածուած կերևին կարգ մի աւերակներ, որ Նաւրուզ կասուի այս օր և նոր օր կը նշանակէ։

Ըստ իս աւելի յարմար կը թուի լինել Բագուան այս վայրը, ուր կը կատարուէր Հայոց Ամանորի մեծ տօնն և ճանապարհի վերայ պիտի լինէր, ուստի անց ու դարձ անողները վայելէին հոգու հացը։

Վանքի այժմեան վայրն՝ Նպատայ հիւսիսն և Եփրատի աջ ափի վերայ մի գոգ բռնած է, որ սակաւ տարածութիւն ունի և բոլորովին յարմարութիւն չունի աւան կամ գիւղաքաղաք լինելու, ուր կերևի այժմեան հսկայ եկեղեցին, որ շրջապատուած է մեծ պարսպով մէջ շինութիւններով և ուր կայ փոքրիկ միաբանութիւն մի։ Մինչդեռ հայկական նշանաւոր ուխտավայր մի ունենալու էր մեծ տարածութիւն, որպէս ունի Նաւրուզ և իւր շրջականերն և կամ այժմեան վանքը կամուրջով մի միացած էր իւր հանդէպը գտնուած Բագուան կարծուած աւերակաց հետ։

Վանքի սահմանի մէջ կան երկու Բօղիներ, Նաւրուզ և վանքի գիւղ. սահմանը ի հարաւ ծաղկանց լեռներու մէջ մեծ տարածութիւն ունի, ի հարաւ 4—5 ժամ մինչև յափունս Գալատոյ ծովակին կը բարձրանայ, արտօրայքը և մարգագետիններն կը բաւականայ 5000 տուն ժողովրդեան։